ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/89

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Բողոք բերող «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով բաց մրցույթ, կոնտեյներների ժամանակավոր պահման հարթակի (հատուկ մասնաշենքի տանիք) վերանորոգման աշխատանքների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 12.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.11.2019թ-ին թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետը և ընդունել «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 12.11.2019թ.-ին:

12.11.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 19.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 19.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.12.2019թ.-ին:

2. <u>«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումը (այսուհետ՝ Կոնսորցիում) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով ընթացակարգին:

Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն ընթացիկ տարվա ընթացքում ոչ ռեզիդենտ կազմակերպության հետ կոնսորցիումով հանդես է գալիս մեկից ավելի անգամներ, 11.09.2019 թիվ 2 արձանագրությամբ որոշել է դիմել ՀՀ Ֆինանսների նախարարություն պարզաբանում ստանալու համար:

Գնահատող հանձնաժողովի 25.09.2019թ-ի թիվ 2.1 արձանագրության 5-րդ կետով Կոնսորցիումի հայտը գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 7-րդ կետով կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Գնահատող հանձնաժողովի 09.10.2019թ-ի թիվ 3 արձանագրության 7-րդ կետի համաձայն գնհատող հանձնաժողովը որոշել կասեցնել նիստը և Կոնսորցիումին

տրամադրել է 3 աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար:

Սահմանված ժամկետում Կոնսորցիումը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները և համապատասխան փաստաթղթերը ներկայացրել է գնահատող հանձնաժողովին:

Մասնավորապես՝ ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի մասով Կոնսորցիումի կողմերը 06.09.2019թ-ին կազմել են 05.09.2019թ-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին համաձայնագիր հետևյալ բովանդակությամբ. «Համատեղ գործունեության 05.09.2019թ-ի պայմանագրի թիվ 1 կետի (պայմանագրի առարկան) 1.2.1 ենթակետում «Գործընկեր-1» «Մասնագիտական փորձառություն» բառերը հանել: «Ֆինանսական միջոցներ» բառերից հետո լրացնել 10 տոկոս բառերով»:

«Համատեղ գործունեության 05.09.2019թ-ի պայմանագրի թիվ 1 կետի (պայմանագրի առարկան) 1.2.2 ենթակետում ավելացնել ֆինասական միջոցներ «90 տոկոս» բառերը»:

Գնահատող հանձնաժողովը 04.11.2019թ-ին թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետով որոշել է չդիտարկել պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագիրը և Կոնսորցիումի հայտը գնահատել է անբավարար:

Գտնում եմ, որ արձանագրությունը կազմված է ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների խախտմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները)

պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծություն և սույն գործի փաստերի լույսի ներքո կարելի է արձանագրել, որ

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նկատառումներից ելնելով կողմերն օրենքով սահմանված կարգով 05.09.2019թ-ին կնքել են համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր:

Առաջացած անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 06.09.2019թ-ին կողմերը համապատասխան փոփոխություն են կատարել պայմանագրում:

Կարգով սահմանված ժամկետներում գնահատող հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունները շտկել և համապատասխան փաստաթղթերը ներկայացրել են գնահատող հանձնաժողովին:

Գնահատող հանձնաժողովը, ցուցաբերելով սուբյեկտիվ մոտեցում, չի դիտարկել պայմանագրի փոփոխությունը և որպես հայտը անբավարար գնահատելու իրավական հիմք նշել է Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերը նշված նորմի տառացի մեկնաբանությունից հստակ երևում է, որ գործադիրը սահմանում է կոնկերտ վավերապայման, որի առկայության պայմաններում միայն

գնահատող հանձնաժողովին իրավունք է վերապահվում մերժելու մասնակցի հայտը և այդ հանգամանքը բացառապես պայմանավորված է մասնակցի կողմից նշված անհամապատասխանությունները չշտկելու հետ:

Սույն գործով Բողոքաբերի կողմից շտկվել են անհամապատասխանությունները, սակայն գնահատող հանձնաժողովը չի դիտարկել ներկայացված փաստաթղթերը, ինչը հաստատվում է հենց բողոքարկվող արձանագրության 7-րդ կետի ուսումնասիրությունից:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տվյալ պարագայում Բողոքաբերը շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բավարարման հասնելու օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնկացել է Պատվիրատուի կողմից հայտարարցած գնանշման հարցմանը:»:

Ելնելով վերոգրյալից, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.11.2019թ-ին թիվ 3.1 արձանագրության 7-րդ կետը և ընդունել «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշում:

3. <u>«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.11.2019թ. գրությամբ դիմել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի կողմից 12.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 20.08.2019թ.-ին ներկայացնելով դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ կոնտեյներների ժամանակավոր պահպանման հարթակի (հատուկ մասնաշենքի տանիք) վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ս/թ օգոստոսի 22-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել բողոքաբեր «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն՝ կազմելով կոնսորցիում ՌԴ ռեզիդենտ հանդիսացող «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ:

«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 25.09.2019թ. թիվ 2.1 որոշմամբ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձան ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման գործընթացում հանձնաժողովը առաջնորդվել է «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ միջև 05.09.2019թ կնքված կոնսորցիումի պայմանագրի 1.2 կետով կողմերի ստանձնած պարտավորություններով, այն է՝ Գործընկեր 1-ի համար՝ Տեխնիկական միջոցներ, Ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, մասնագիտական փորձառություն և Գործընկեր 2-ի համար՝ մասնագիտական փորձառություն և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 32-րդ կետի 7-րդ ենթակետի <բ> պարբերությամբ: Կոնսորցիումի փաստաթղթերի գնահատման ժամանակ հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին.

Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 3-րդ ենթակետի <ա> պարբերությամբ սահմանված է, որ <հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Կոնսորցիումի պայմանագրով «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն ստանձնել է «ֆինանսական միջոցներ» չափորոշիչով որակավորման պարտականությունը: Համաձայն ս/թ սեպտեմբերի 27-ին ՀՀ ՊԵԿ-ի տրամադրած եզրակացության «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է կոնսորցիումի կողմից տրված գնային առաջարկից:

Չի ներկայացվել Հավելված 3.2 և աշխատանքային ռեսուրսները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթեր:

Կոնսորցիումի պայմանագրով և՝ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն, և՝ «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ն ստանձնել են «Մասնագիտական փորձառություն»: «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ կողմից կատարված նմանատիպ պայմանագրերը չեն ապահովում հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի <ա> պարբերությամբ սահմանված պահանջը՝ գնային առաջարկի 50 և 20%:

Ներկայացված չեն նմանատիպ պայմանագրերի անբաժանելի մաս կազմող հավելվածները («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ և «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ), որոնց բացակայության պարագայում «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ կատարած պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատել հնարավոր չէ: «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի կատարած նմանատիպ պայմանագրի կատարման ժամկետը սահմանված է կնքման օրվանից 120 օրացուցային օր, որը լրանում է 15.12.2017թ.: Հանձնման Ակտը կազմված է 17.12.2017թ.:

Առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 47-րդ կետով՝ հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը և առաջարկել «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ կոնսորցիումին 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Որպես արձանագրված անհամապատասխանությունների շտկում կոնսորցիումը ներկայացրել է. «ֆինանսական միջոցներ» - Ներկայացվել է կոնսորցիումի պայմանագրի համար լրացուցիչ համաձայնագիր, սակայն չի ներկայացվել ՊԵԿ-ի եզրակացության շտկում: «Աշխատանքային ռեսուրսներ» - ներկայացվել է Հավելված 3.2, աշխատակիցների համաձայնագրեր, անձնագրեր, դիպլոմներ, վարորդական վկայականներ: Մասնագիտական փորձառություն - Ներկայացվել է կոնսորցիումի պայմանագրի համար լրացուցիչ համաձայնագիր, «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի գրություն, «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի նմանատիպ պայմանագրի լրացուցիչ համաձայնագիր, «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի նմանատիպ պայմանագրերի հավելվածներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ)՝ 48-րդ կետով, որպես ֆինանսական միջոցների շտկում սահմանված է, որ շտկում է հանդիսանում կոմիտեի կողմից տրամադրված նոր տեղեկատվությունը և առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ով (գնումների գործընթացի կազմակերպման կարգ)՝ մասնավորապես 43-րդ կետի 3-րդ ենթակետով և

«Գնումների մասին» ՀՀ օրենքով, այն է՝ մասնակիցների որակավորումները գնահատվում են մասնակցության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, հանձնաժողովի ս/թ նոյեմբերի 4-ի թիվ 3.1 որոշմամբ մերժվել է «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ կոնսորցիում հայտը և առաջարկվել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Կարծում եմ, որ բողոքաբեր անձի բողոքը անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցայի, համաչափ և ոչ խտրական կազմակերպումը:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

22.08.2019թ.-ին «ՀԱԷԿ» ՓԲԸի կողմից կոնտեյներների ժամանակավոր պահման հարթակի (հատուկ մասնաշենքի տանիք) վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր):

«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի միջև 05.09.2019թ.-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրի 1.2 կետի համաձայն՝

1.2.1 ենթակետի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները՝ «Գործընկեր-1» Տեխնիկական միջոցներ, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ, Մասնագիտական փորձառություն:

1.2.2 ենթակետի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները՝ «Գործընկեր-2» Մասնագիտական փորձառություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.09.2019թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ «Հատուկէներգամոնտաժ»

ՍՊԸ-ն և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում՝ 27.09.2019թ.-ին պարզվել է, որ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2019թ. թիվ 526-Ն որոշման 47-րդ կետով, կասեցրել է նիստը և առաջարկել է «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ին և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 04.11.2019թ. նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության պահանջը, որոշել է որպես շտկում ներկայացված կոնսորցիումի պայմանագրի լրացուցիչ համաձայնագիրը չդիտարկել, որի հիման վրա անբավարար է գնահատել Մասնակցի հայտը և մերժել է:

Կոնսորցիումի կողմերը 06.09.2019թ.-ին կազմել են 05.09.2019թ-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին համաձայնագիր հետևյալ բովանդակությամբ. «Համատեղ գործունեության 05.09.2019թ.-ի պայմանագրի թիվ 1 կետի (պայմանագրի առարկան) 1.2.1 ենթակետում «Գործընկեր-1» «Մասնագիտական փորձառություն» բառերը հանել: «Ֆինանսական միջոցներ» բառերից հետո լրացնել 10 տոկոս բառերով»:

«Համատեղ գործունեության 05.09.2019թ-ի պայմանագրի թիվ 1 կետի (պայմանագրի առարկան) 1.2.2 ենթակետում ավելացնել ֆինասական միջոցներ «90 տոկոս» բառերը»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի կողմից 12.11.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է, ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի թիվ 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ընդ որում, հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը

համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ ենթակետի համաձայն՝ … գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

22.08.2019թ.-ին «ՀԱԷԿ» ՓԲԸի կողմից կոնտեյներների ժամանակավոր պահման հարթակի (հատուկ մասնաշենքի տանիք) վերանորոգման աշխատանքների կատարման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով բաց մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ն («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) Հանձնաժողովի 25.09.2019թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովի կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում՝ 27.09.2019թ.-ին պարզվել է, որ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը ուսումնասիրելով Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը արձանագրել է անհամապատասխանությունները և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2019թ. թիվ 526-Ն որոշման 47-րդ կետով՝ կասեցրել է նիստը և առաջարկել է «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ին («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 04.11.2019թ. նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության պահանջը, որոշել է որպես շտկում ներկայացված կոնսորցիումի պայմանագրի լրացուցիչ համաձայնագիրը չդիտարկել, որի հիման վրա անբավարար է գնահատել Մասնակցի հայտը և մերժել:

«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի և «ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի միջև 05.09.2019թ.-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրի 1.2 կետի համաձայն՝

1.2.1 ենթակետի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները՝ «Գործընկեր-1» Տեխնիկական միջոցներ, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ, մասնագիտական փորձառություն:

1.2.2 ենթակետի համաձայն՝ Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները՝ «Գործընկեր-2» Մասնագիտական փորձառություն:

Կոնսորցիումի կողմերը 06.09.2019թ.-ին կազմել են 05.09.2019թ-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին համաձայնագիր հետևյալ բովանդակությամբ. «Համատեղ գործունեության 05.09.2019թ-ի պայմանագրի թիվ 1 կետի (պայմանագրի առարկան) 1.2.1 ենթակետում «Գործընկեր-1» «Մասնագիտական փորձառություն» բառերը հանել: «Ֆինանսական միջոցներ» բառերից հետո լրացնել 10 տոկոս բառերով»:

«Համատեղ գործունեության 05.09.2019թ-ի պայմանագրի թիվ 1 կետի (պայմանագրի առարկան) 1.2.2 ենթակետում ավելացնել ֆինասական միջոցներ «90 տոկոս» բառերը»:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի 04.11.2019թ.-ի կայացած թիվ 3.1 արձանագրությամբ մանրամասն չի

նկարագրվել որպես շտկում ներկայացված կոնսորցիումի պայմանագրի լրացուցիչ համաձայնագիրը չդիտարկելու պատճառները, որպիսի պայմաններում միայն Հանձնաժողովը օբյեկտիվորեն կկարողանար հանգել պատճառաբանված որոշման կայացմանը:

Անդրադառնալով որպես շտկում ներկայացված կոնսորցիումի պայմանագրի լրացուցիչ համաձայնագրի իրավաչափությանը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական) ձևով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից: Երկկողմ (բազմակողմ) գործարքները կարող են կնքվել նույն օրենսգրքի 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված եղանակներով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով և կողմերի համաձայնությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, որոնց պետք է համապատասխանի գործարքի ձևը (որոշակի ձևաթղթի վրա կնքելը, կնիքով դրոշմված լինելը և այլն), և կարող են նախատեսվել այդ պահանջները չպահպանելու հետևանքներ (...): Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործարքներ կնքելիս ստորագրությունների մեխանիկական և պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերարտադրությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ իր ստորագրության այլ նմանօրինակի օգտագործում թույլատրվում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը գրավոր ձևով կարող է կնքվել կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու, ինչպես նաև փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային հաղորդակցության կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով, որոնք հնարավորություն են տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից: (...) Նույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե պայմանագիր կնքելու գրավոր առաջարկն ընդունված է նույն օրենսգրքի 454-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ պայմանագիրը՝ որպես գործարք, կարող է կնքվել բանավոր կամ գրավոր ձևով: Պայմանագրի ձևի վերաբերյալ օրենսդրական կարգավորման նպատակը պայմանագրի հիման վրա ծագող հարաբերություններն ավելի հստակ դարձնելն է, քաղաքացիական շրջանառության կայունությունն ապահովելը, պայմանավորված պայմանագրի տվյալ տեսակի բնույթով՝ ապագայում հնարավոր վեճերի կանխումը: Մասնավորապես՝ պայմանագրի կնքման բանավոր ձև նախատեսելու միջոցով քաղաքացիական շրջանառությունը չի ծանրաբեռնվում (օրինակ՝ կնքման պահին կատարվող գործարքները, որոնց համար հատուկ կարգավորում նախատեսված չէ, կարող են կնքվել բանավոր ձևով): Ինչ վերաբերում է գրավոր ձևով կնքվող գործարքներին, ապա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործարքների որոշ տեսակների համար հստակ նախատեսելով գրավոր ձև՝ օրենսդիրը կարևորել է այդ պայմանագրերը կնքված համարվելու համար որոշակի պահանջների պահպանումը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին կետ, 450-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետեր): Սահմանելով գործարքի կնքման գրավոր ձև՝ օրենսդիրը նախատեսել է այդ ձևը չպահպանելու երկու հնարավոր հետևանք.

1) գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից՝ չզրկելով գրավոր և այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից,

2) օրենքում կամ կողմերի համաձայնությունում ուղղակի նշված դեպքերում գործարքի հասարակ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության:

Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից պայմանագրի տվյալ ձևի համար սահմանված է գրավոր ձև՝ առանց ձևը չպահպանելու հետևանքները նշելու (օրինակ՝ կապալի պայմանագիր, հանձնարարության պայմանագիր, կոմիսիայի պայմանագիր և այլն), ապա գործում է վերը նշված 1-ին կանոնը: Վերը նշված իրավական հետևանքը կիրառվում է բացառապես վեճի առկայության դեպքում: Այսինքն՝ այն դեպքերում, երբ տվյալ գործարքը կնքված լինելու փաստը կողմերի կողմից չի վիճարկվում, ապա գործարքի հասարակ գրավոր ձևը պահպանված չլինելու հանգամանքն ինքնին որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում: Հետևաբար նշված հետևանքը դատավարական բնույթի է: Այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով հստակ նախատեսված է, ապա պայմանագրի գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է անվավերության *(տե՛ս, Զարուհի Հայրապետյանը և Գայանե Ղազարյանն ընդդեմ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/0556/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: ՀՀ վճռաբեկ դատարանը, բացահայտելով նշված հասկացությունների բովանդակությունը, արձանագրել է, որ «կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը, իսկ «կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այսինքն՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է *(տե՛ս, Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը)*:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ ինչպես ցանկացած պայմանագիր, համատեղ գործունեության պայմանագիրը ևս կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Այսինքն՝ համատեղ գործունեության իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունն պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի իրենց ավանդները միացնելուն և առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործելուն՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ համատեղ գործունեության իրավահարաբերության առկայության փաստն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, համադրելով դրանք գործում առկա փաստերին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կոնսորցիումի կողմից լրացուցիչ համաձայնագիր կնքելը չի հակասում ՀՀ գործող օրենսդրական նորմերին, այլ ընդհակառակը, ինչպես վերը նշվեց, կողմերը ազատ են կնքել ՀՀ օրենսդրության պահանջներին չհակասող ու դրանցից բխող պայմանագիր, ինչպես նաև համաձայնագիր՝ պահպանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, այն է՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից 04.11.2019թ. նիստի թիվ 3.1 արձանագրությամբ կայացված որոշումը ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից և պահանջներից:

Անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված բողոքի մյուս՝ ընտրված մասնակից ճանաչելու պահանջին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն բողոքի բավարարմամբ՝ Հանձնաժողովի կողմից 04.11.2019թ. նիստի թիվ 3.1 արձանագրության 7 կետով կայացված որոշումը՝ «Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի («ԻնտերԴորՍերվիս» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) հայտը մերժելու մասով, դադարեցնելու հիմքով, Հանձնաժողովն է պարտավոր կիրառել Կարգի 48-րդ կետով սահմանված դրույթները և կայացնել որոշում արձանագրված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատաս-խանությունների շտկման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հատուկէներգամոնտաժ» ՍՊԸ-ի կողմից 12.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/89 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-1/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.11.2019թ.-ի թիվ 3.1 արձանագրության 7 կետով կայացված որոշումը:

2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ